

ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ Խ. ԳՅՈՒԼԲԵԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Ընկերներ: Այժմ մեր խնդիրն է ինքնաքննադատորեն վերանայել մեր աշխատանքները, արագորեն վերացնել ունեցած թերությունները, սեսիայի արդյունքներից ու մեր Կենտրոնական Կոմիտեի ցուցումներից ելնելով, վերակառուցվել և մեր բոլոր ուժերը, գիտելիքները, փորձառությունը ի սպաս դնել մեր սոցիալիստական գյուղատնտեսությանը և դրանով իսկ զարգացման ավելի բարձր աստիճանի հասցնել միջուրինյան բիոլոգիական գիտությունը:

Այդ վերակառուցումը պետք է կատարել բոլոր ուղղություններով: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել, որպեսզի մեր միջնակարգ դպրոցներում բիոլոգիական առարկաների և հատկապես դարվինիզմի դասավանդումը տարվի մատերիալիստական բիոլոգիայի ուղղությամբ: Անհրաժեշտ է ստեղծել նոր դասադրքեր: Մեր բուհերում նույնպես դրությունը միջնակարգ չէ. օրինակ՝ Պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի երեք ամբիոնները գտնվել են վեյսմանիստ-մորգանիստների հետևողների ձեռքում, որոնք տարիներ շարունակ իրենց սխալ ուսմունքներով դաստիարակել են մեր երիտասարդ բիոլոգներին: Օրինակ՝ ամբողջ 27 տարի ընկ. Տեր-Պոլոսյանը վեյսմանիստական գրքերից ելնելով՝ կարդում է իր դասախոսությունները և հանդես է գալիս գիտական սեսիաներում, ուսանողական կոնֆերանսներում և գիտական խմբակներում:

Այստեղ հարկ եմ համարում մատնանշել, որ նույն ամբիոնում աշխատում է ընկ. Բատիկյանը, որը դարվինիզմի պրոպագանդիստ լինելով, Միչուրինի և Լիսենկոյի տեսության պաշտպաններից մեկը հանդիսանալով՝ հանդուրժել է նման դրություն, չի քննադատել մորգանիստներին և աշտվողական դիրք է բռնել:

Անթուլյատրեյի պետք է համարել այն փաստը, որ մեր մի քանի բարձրագույն ուսումնական հիմնարկներից դուրս է մղվել դարվինիզմի առարկան, ինչպես, օրինակ՝ Գյուղինստիտուտից և Զոոլոգիկո-ստիտուտից:

Ճիշտ չէ նաև այն, որ Համալսարանի կենսաբանական ֆակուլտետը այժմ չունի դարվինիզմի և գենետիկայի ամբիոն, որը ունեն Միության մնացած համալսարանները:

Պետք է լավ հիմքերի վրա դնել ուսանողների, ասպիրանտների և գիտական աշխատողների քաղաքական-տեսական պատրաստականության դործը, որպեսզի նրանք ճիշտ կողմնորոշվեն և սխալների մեջ չընկնեն:

Մենք պետք է վերակառուցենք նաև Միչուրինի, Լիսենկոյի ուսմունքի և դարվինիզմի պրոպագանդան:

Սրանից հետո անհանդուրժելի է, որ այդ պրոպագանդան սահմանափակվի միայն կյանքի ծագման, մարդու ծագման ու ռասայական տեսություններով:

Պետք է լայն կերպով մասսայականացնել Միչուրինի, Լիսենկոյի ուսումնասիրությունները: Պետք է վերանայել գիտահետազոտական ինստիտուտների և սելեկցիոն կայանների թեմատիկ պլանները, աշխատանքի մեթոդներն ու կարգերը:

Չնայած սելեկցիոն անասնապահության մեջ ավելի շուտ է սկսել կիրառվել, քան բուսաբանության մեջ, բայց վերջինս անհամեմատ ավելի առաջ է անցել անասնապահությունից: Շատ բուսաբաններ օրինակ են վերցրել անասնապահներից, անգամ եթե հաշվի առնենք անասունների դանդաղ բազմացումը:

Մեր բուսաբան և անասնապահ սելեկցիոններների զգալի մասը չի գնացել Միչուրինի, Լիսենկոյի ցույց տրված ճանապարհներով: Հաջողություն են ունեցել միայն այն սելեկցիոնները, որոնք կանգնած են եղել դարվինիզմի դիրքերի վրա: Բայց այդ բավական չէր: Սելեկցիոնները, որպես-

զի հաջողություն ունենա, պետք է անձամբ լավ ճանաչի անասունը, ուսումնասիրի և իր ձեռքով կատարի հիմնական աշխատանքները, հատկապես ընտրությունը: Նա ծանոթ պետք է լինի մեր կոլխոզային, սովխոզային անասնաբուծությանը, նրա առաջավորներին: Այդ բանին լավագույն օրինակ են տալիս ակադ. Իվանովը, Շտեյնմանը, որոնք միշտ եղել են արտադրության մեջ և անձամբ զբաղվել են անասունների սելեկցիայով: Արդյունքը պարզ է՝ մեր երկիրը ստալինով բարձր արտադրանք ունեցող նոր ցեղեր:

Այնուհետև ընկ. Գյուլբեկյանը մանրամասն կանգ է առնում անասնապահության արագ զարգացման, հոտի տեսակներ աղնվացնելու, անասունների նոր տեսակներ ստանալու հարցերի հետ կապված մեր զոոտեխնիկ սելեկցիոններների անելիքների վրա, նշելով այն հանգամանքը, որ ամենից առաջ այդ սելեկցիոնները պետք է անմիջականորեն կապված լինեն արտադրության հետ, մեր կոլխոզների և սովխոզների հետ: Նա խնդիր է դնում խելացի կերպով կիրառել անասունների ցեղերի վերափոխումը, խուսափելով նեղ ազգակցական բուծումից:

Մեր ռեսպուբլիկայի շատ կոլխոզներում դեռևս գիտակցաբար, թե անգիտակցաբար զգալի չափերով կիրառվում է այդ վնասակար մեթոդը, որովհետև բազմաթիվ կոլխոզներ ունեն ազնվացեղ մեկ կամ լավագույն դեպքում երկու արտադրողներ: Տարեց-տարի, մինչև որ ցուրը ծերանա կամ անընդունակ դառնա անսխտեմ կերպով օգտագործվում է:

Հետևաբար այդ կոլխոզներում նախքան սելեկցիոն աշխատանք լավ հիմքերի վրա դրվելը, անհրաժեշտ է կոլխոզ լսմբերի բաժանել, կցել նրանց արտադրողներ և երկու տարին մեկ նրանց փոփոխել նեղ ազգակցական բուծումը կանխելու համար: Վերցնենք այնպիսի հասարակ խնդիր, ինչպիսին է գրանցումը և հաշվառումը: Այս խնդրում նույնպես Միչուրինի և Լիսենկոյի տեսությունը մեզ շատ կօգնի: Մեզ մոտ հաշվառումը նեղ իմաստով է հասկացված ու կիրառվում: Լավագույն դեպքում գրանցում են արտադրանքը, գեներացիոն ինչ արտադրողով զուգավորվելը և ծննդաբերության օրը: Պետք է անպայման գրանցումները կատարել ավելի մանրամասն, նախ պետք է կիրառել անհատական գրանցումներ— գրանցել անասունների աճը, զարգացումը, բոլոր արտաքին պայմանները, կերակրումը, նրա փոփոխությունները, քաշը հղիությունից առաջ և հղիության շրջանում, տարիքային փոփոխությունները և այլն:

Ապա ընկ. Գյուլբեկյանը անցնում է անասունների տարբեր գեներացիաներից ստացված սերնդի հատկություններին, ինչպես նաև ժառանգականության բնորոշման հարցերին ու սերունդը խնամելու պայմաններին, խնդիր դնելով որ ցածր գեներացիայի սերնդի համար պետք է կերակրման ու խնամքի լավագույն պայմաններ ստեղծվեն:

Մի քանի խոսք էլ անասունի ծագման նշանակության մասին: Իհարկե, ծնողները հատկապես մոտիկ ծնողները՝ հայրը, մայրը, մեծ մայրը և մեծ հայրը խոշոր դեր են խաղում սերունդների ծառանդականության մեջ, բայց սխալ է այն պրակտիկան, որ երբեմն առանձնահատուկ ուշադրություն դարձնելով անասունի ծագման վրա, անտեսվում է նրա սոցիալական առավելությունը: Սերնդի կյանքի պայմանները ուժեղ կերպով փոխվելիս կփոփոխվի նաև սերնդի մեթոդաբանությունը: Այս տեսակետից ծնողները կարող են բարձր մթերատվություն ունենալ, բայց սերունդները՝ ցածր և ընդհակառակը: